

ԳՐԱԽՍՆԱԿՆ—ՔՆՆԱԴԱՏԱԿՆ

«ՇՈՂԵՐ».—Գրական գեղարուեստական քննադատական ժողովածու. հրատարակու թիւն Ա. Պետերբուրգի հայ ուսանողու թիւն. 4915.

Մի կանխակալ ուրախութեամբ սկսեցինք կարդալ Պետերբուրգի հայ ուսանողութեան հրատարակած այս ժողովածուն. պատանեկութեան հասակից դեռ լաւագոյն յիշողութիւններ ունինք Ռուսաստանի մայրաքաղաքում ուսանող հայ երիտասարդութեան կատարած գրական գործի մասին. շատ լաւ յիշում ենք այն յափշտակուած ժամերը, որ մենք նուիրում էինք «Ուսկոյններ»-ի, «Լուսադէմին»-ի և բարմաթիւ փոքրիկ բրոշիւրների ընթերցանութեանը. այդ բոլոր գրքերը՝ բոպէի պահանջին համապատասխան և ընթերցողների տրամադրութեանը յարմար—թարգմանուում և հրատարակուում էին Պետերբուրգի հայ ուսանողութեան ջանքերով: Ընդ տէ, Ռուսական համալսարաններում ուսանող հայ երիտասարդները բաղմաթիւ են ու մի պատկառելի բանակ են կազմում, քայք հայ գրականութեան ու հայ կեանքի մշակման անդամատնում դժբախտաբար իրանց թուի համապատասխան բան հանդէս չեն բերում. և մեր մտաւոր լաւագոյն շրջանների շարունակ հնչող բողբոխ մենք ևս միացնում ենք մեր ձայնը, կրկնելով, որ հայ ուսանողը իւր զգայուն սրտով, իւր բողբոջ տեմպերամենտով իւր մտաւոր ու կուլտուրական յարմարութիւններով թարմ ու աշխոյժ յուշարար պէտք է հանդիսանայ մեր հայ կեանքի, հայ գրականութեան համար. քաղաքակրթական մեծ կենտրոններին մօտ ապրելով իւր ժամանակի մի որոշ մասն ևս պէտք է նուիրի հայրենի իրականութեանը—կամ մշակելով ու պարզաբանելով այն, կամ Եւրոպական կեանքից օրինակներ բերելով—նպաստել ազգային կեանքի առաջադիմութեան: Այդ պահանջն անտեղի կըլինէր անել որ և է մեծ ազգի, թէկուզ որու ուսանողներից. քայք հայ ազգի ուսանող դաւակը պէտք է ամեն կերպ ձգտի որոշ կապ հաստատել, կամ եղածն ամրապնդել Եւրոպական լուսաւոր աշխարհների և մեր հայրենի իրականութեան միջև. մի կապ, որ չորհիւ զանազան համալսարաններում ցրուած հայ ուսանողների փոքրիկ խմբակների, գնալով աւելի և աւելի պիտի ամրապնդուի ու հայ մտքի առաջխաղացութեան հաստատուն գրաւականներից մէկը դառնայ: Որովհետեւ

հայ ուսանողը չէ՝ որ պէտք է դադարի ուսանող լինելուց և մանի հասարակական կեանքի մէջ, իւր հետ տանելով իւր հասարակական ձգտումներն ու իդէաները։ Այսօր դժբախտաբար չենք կարող ա-սել, որ հայ ուսանողը կատարում է իւր դերը թէկուզ մինիմալ չափով, ցաւօք սրտի այսօր մենք աւելի շուտ հակառակն ենք տեսնում։

Այդ անմխիթար երեոյթի պատճառների մէջ չենք ուզում այժմ մտնել, բնդհակառակն այսօր մեր գործն աւելի մխիթարա-կան մի երեոյթն արձանագրելն է. մեր առաջ է Պետերբուրգի հայ ուսանողութեան մի բաւականին ստուար հատոր, լաւ, զեղեցիկ արտաքինով, թուղթն ու տեղը գոհացուցիչ, իսկ բովանդակութիւնը հարուստ և բազմակողմանի երեսմ է. որ գործի զեկավար հայ ուսանողները ամեն ջանք գործ են դրել ժողովածուն հետաքրքիր ու ճոխ դարձնելու։

Ժողովածուն բաղկացած է երկու՝ համարեա հաւասար մասե-րից, առաջին բաժինը նուիրուած է գրական զեղարուեստական նիւթերի, աշտեղ մտնում են մի քանի բանաստեղծութիւններ երկու՝ բաւականին խոշոր պատմուածքներ և մի երկու մանր պատ-կերներ. իսկ երկրորդ բաժնում Ա. Տէրաէրեանը մի ընդարձակ ուսումնասիրութեան մէջ Մուրացանին ներկայացնում է որպէս մտածող և զեղպէտ և Ե. Ղարիբեանը Շիրվանզադէի գրուածք-ների մէջ հոգեհիւանդարանական տարրերի ուսումնասիրութեան մի փորձ է անում։

Մի երկու խօսք այդ պատմուածքների մասին։ Գ. Մեսեանը իւր «Սեզա» պատկերի մէջ նորից վերյուշում, վերապրում է Սեզա անունով մի աղջկայ հետ ապրած ու զգացած իւր ժամերը, երբ անցեալի յուշերը գալիս խուսներամ շարքերով լցնում պաշարում են հեղինակի սիրան ու մտքերը, այդպիսի րօպէներին նստում է նա, մոռանում շուրջը աման ինչ, փակում է աչքերը և սկսում է մտածել ու մտածել միմիայն Սէզայի վրայ, որպէս զի աւելի պարզ, աւելի վճիտ նկարուի նրա մտքի մէջ Սէզայի արվարդ շուրթերը, նրա նուրբ ու գրաւիչ դիմագծերը, «Բաշում եմ այդ ժամանակ անդդալորէն յիշատակարանս գրքերի ծալքի տակից բանում եմ հանդարտութեամբ նրա էջերը, չբջում եմ մէկ մէկ՝ կանգնում քարացած հայեացքով նրա ամեն մի տողի, ամեն մի բառի վրայ ու նրանց տակից նորից յարութիւն է առնում, նորից ժպտում է իմ դէմ դարձեալ նոյնանման, դարձեալ նոյն չքնաղ Սէզան։ Եւ սա կրկնում է յաճախ, և սա կրկնում է անվերջ»։ Այս խորհր-դաւոր ու բազմախոստ յառաջաբանից յետոյ պ. Մեսեանն այնու-հետեւ ծանօթացնում է մեզ իւր Սէզայի հետ։ Եւ պէտք է խոստո-վանել, որ այն, ինչ որ պատմում է Մեսեանը Սէզայի մասին, չեն

արդարացնում այն յիշողութիւնները, որոնք հեղինակին տանջում են այդպէս անվերջ, երկուսից մէկը, կամ պ. Մեսեանին չի յաջողուել իւր գեղեցիկ և հետաքրքիր ապրածը նորից վերապրել և կողմնակի մարդկանց համար էլ հետաքրքիր ու գեղեցիկ դարձնել, և կամ այդ անցեալը չի եղել այնքան գրաւիչ ու իրօք գեղեցիկ, ինչքան այժմ թւում է հեղինակին, թերևս այն ընդհանուր հոգեբանութեամբ, որ անցեալի քաղցր բոպէները աւելի քաղցրանում են ներկայի և մանաւանդ աննպաստ ներկայի ժամերին։ Որովհետև ինչ է ապրել Եօհաննէսը (հեղինակը) Աէդայի հետ. ինչ կապեր է ունեցել նա նրա հետ. ինչ խորհրդաւոր, ուսմանտիկական կամ տրագիկ ապրումներ ունեցել նրա հետ. մեզ առաջադրուած պատմութեամբից պէտք է ասենք, որ մի առանձին ոչինչ։ Աէդան, մի վառ-վառն աղջիկ, իւր գեղեցկութեամբ գրաւում է Եօհաննէսին, մի ուսանող հայի. ամեն անգամ, երբ տղան Աէդային պատի տակով անցնում է, տեսնում է Աէդային պատուհանի առաջ նստած, ծանօթանում են իրար հետ, բնականաբար ամեն անգամ խօսակցութիւն է սկսում նրանց մէջ, որ երբեմն ժամեր է տևում։ Յետոյ, աղջիկը ամուսնանում է մի այլ տղայի հետ, որին նա չի սիրում ու մի օր, երբ յանկարծակի պատահում է Աէդան Եօհաննէսին, պատմում է նրան, թէ ինչպէս ինքը զժբախտ է. թէ ինչպէս իւր մարդուն չի սիրում, և ինչպէս նրա հետ ապրում է բոլորովին օտարի նման. նրանց ամուսնութիւնը բերել, ամուր կապել է «երկու ջուկ ջուկ աշխարհներ, որոնք մի վերմակի տակ կեանք են վերջացնում, չարունակ ուրիշների համար արտասուելով».. Եօհաննէսը մխիթարում է Աէդային ասելով. «... Ժամանակ կանցնի, կըգան նոր օրեր, նրանք նոր ուրախութիւն կը բերեն իրենց հետ ձեր այդ կեանքի մէջ ու դուք անպայման կըմոռանաք նրա տակ այդ ամենը»։ Այնուհետև Եօհաննէսը Աէդային չի պատահում երբեք. բայց յիշողութիւններն ու գեղեցիկ ապրումները չարունակ վրդովում են նրա հոգին. «և սա կրկնւում է յաճախ, և սա կրկնւում է անվերջ...» Այս է Աէդայի և Եօհաննէսի ամբողջ վէպը. թէև այս վէպի մէջ իսկապէս առանձին մի բան չկայ, բայց պէտք է ասել, որ պ. Մեսեանը ընդհանուր առմամբ հետաքրքիր է պատմել և ընթերցողը չի ձանձրանում կարդալիս, թէև մի քանի անգամ հիասթափւում է, որովհետև պատմութեամբի ընթացքից բղխող մի քանի հանգամանքներ մինչև վերջն էլ պակասում են նրա մէջ։ Պ. Մեսեանը թէև դեռ չի թափանցել մարդկային հոգու խորքերը, բայց գտել է այնտեղ մտնելու ուղիղ ճանապարհը. և եթէ իրանից թօթափի հետզհետէ կէս ուսմանտիկ կէս սանտիմենտալ դժերը, որոնք զգալ են տալիս իրանց այս պատմութեամբի մէջ, յոյս կայ, որ նա մեզ շատ աւելի շնորքով պատկերներ տայ։ Լեզուն կոկ է և

սահուն, տեղ տեղ պատկերաւոր, որ առանձին չնշտ է մտնում պատմութեան մէջ:

Երկրորդ խոշոր պատմութեամբը պ. Ար. Յովհաննիսեանի «Լիւսի»ն է: Ակզբից ստեմ, որ խիստ հետաքրքիր մի պատմութեամբ է սա, չնորհրով և առանձին տաք տեմպերամենտով պատմութեամբ: Երկթը պարզ է ու անպաճոյճ—Լիւսին վաղ գրկուելով հօրից, ստիպուած է ուսումը կիսատ թողնել, տանը նստել և օգնել իւր մօրը—կարի ու ձեռի մէջ: Հարեանի որդի Արամը, Լիւսիի հասակընկերը և խաղակիցը—աշխատում է օգնել այդ ընտանիքին և Լիւսիի համար տեղ է գտնում մի վաճառականի մօտ—գանձապահի տեղ: Արամը աւարտում է ուսումը միջնակարգ դպրոցում, ապա անցնում է արտասահման առաջուց խօսք տալով Լիւսիին, որ նրանք իրար հետ կամուսնանան, ուսումը աւարտում է ու գալիս Լիւսիի հետ ամուսնանում: Իսկ Լիւսին—Արամի բացակայութեան ժամանակ, իւր չէֆ վաճառականի կողմից մի օր բռնի մոլորւում է և իրան դժբախտ դգում: Երբ Արամը վերադառնում է արտասահմանից, Լիւսին նրան տանն քան պատմում է և խնդրում իրան թողնել, որովհետեւ Արամին արժանի չէ նա: Արամը թէև ցաւալով և ափսոսալով, բայց վերջը համաձայնում է նրա հետ ամուսնանալ և երկուսով միասին սկսում են ըստ երեոյթին երջանիկ կեանք վարել, յարգուած հասարակութիւնից և սիրուած բարեկամներից: Անցնում է ժամանակ և մի օր դոկտոր Արամին այցելութեան է գալիս Բերլինից Ալբերտինա Շուլց անունով մի կին—4-5 տարեկան երեխան հետը, և պատկերը միանգամից փոխում է. երեխան Արամինն է, Ալբերտինա Շուլցը նրա նախկին սիրուհին: Ալբերտինան իւր իրաւունքն է պահանջում. «Միթէ կարծում էիր, որ այդքան հեշտ է փշրել ուրիշի կեանքը և անպատիժ չարունակել ճանապարհը»: Լիւսին լաւ է հասկանում իւր դրութիւնը ու գաղտնալով Ալբերտինային ասում է. «Մի գնաք այստեղից, այս տանը դուք աւելի շատ իրաւունք ունէք մնալու, քան թէ ես, այժմ օտարը ես եմ այստեղ: Ես, որ կատարելագոյնն էի համարում նրան բոլոր մարդկանց մէջ... Ես այնպէս հաւատում էի նրան, այնպէս սիրում»: Լիւսիի բաւական ու աշխարհն այնպէս արագօրէն խորտակւում է: Մենք տուինք այս գեղեցիկ պատմութեամբի լոկ կմախքը: Նրա նման մի քան մենք հաստատօրէն յիշում ենք նաև դերմանական բեմում տեսած: Բայց այդ հանգամանքը ոչինչ նշանակութիւն չունի, որովհետեւ Լիւսիի, Արամի և Ալբերտինայի յարաբերութիւնները մի անգամ չեն կրկնում: մանաւանդ նմանօրինակ Ալբերտինաները իրանց փոքրիկ երեխաներով պէտք է որ շատ ծանօթ լինեն արտասահմանում սովորող ուսանողների համար: Ամբողջ պատմութեամբը գրուած է թաքմ ու ատող շնչով, լեզուն գեղեցիկ է ու սահուն, տեղ տեղ բարձրացած

ու բանաստեղծական: Մի օրինակ, Լիւսիի և Արամի առաջին համարոյն ու սիրոյ երգածը հետեւեալ կերպով է նկարագրում. «Կիշեր է, զոյգը նստել է ծովի ափին. «Յանկարծ Արամին թւաց, որ ծովի ափն իջնում է գէպի վար և որ ծովի լեռնամբարձ ջրերը մի հսկայ գրոհով գալիս են գէպի նրանց . . . Կարծես արհաւիրքից աղաառուելու փութանքով նա փաթաթուեց Լիւսիին՝ որպէս մի հզօր նեցուկի և նրանց հրարորբոք շրթունքները իրար խառնուեցին . . . Աստղերը ծածկեցին իրանց երեսները վազորդեան խաւարի տակ, հովերը լոնցին, ալիքները խշխշալով յետ յետ գնացին գէպի ծովի խորքը ուրիշի գաղտնիքը շտեմնելու համար . . . Ծովի յատակից մի օխորժալուր մշուշ նազանքով բարձրացաւ և իւր քնքոյշ, շամանդաղի պէս նուրբ թևերի մէջ առաւ նրանց» . . .

Ժողովածուի երկրորդ բաժնում, ինչպէս ասացինք, Մուրացանի և Շիրվանզադէի մասին քննադատական յօդուածներ կան: Երկու յօդուածն էլ նորութիւն է մեր գրականութեան համար: Մինչև այժմ Մուրացանին ոչ ոք այդպէս բարեխիղճ ու մանրակրկիտ—որոշ հայեացքից զեկամարուելով—չէր քննել, ինչպէս այդ անում է պ. Ա. Տէրտէրեանը իւր «Մուրացանը որպէս մտածող և գեղագէտ» յօդուածով: Գեղագիտութեան, կամ աւելի լաւ է ասել էստետիկայի նկատմամբ իմ ունեցած հայեացքները զգալիօրէն տարբեր են պ. Տէրտէրեանի գեղագիտական ըմբռնումներից, բայց այդ տարբերութիւնները մեծ մասամբ թէսբիայի մէջ են, քան գործնականի. ուստի և Մուրացանի երկերի վերլուծութիւնը և այդ երկերի գեղարուեստական արժէքի գնահատումը ընդհանուր առմամբ ինձ ոչ միայն գոհացրեց, այլ և մեծ ուրախութիւն պատճառեց, որովհետև Մուրացանն իրօք որ մինչև օրս տարօրինակօրէն անձանաչ էր մնացել ու լուծեալ մատնուել, մինչդեռ նա հայ սոմանի տաղանդաւոր ներկայացուցիչներից է, հայ լեզուի ընտիր ճաշակաւոր և օրինակելի վարպետը, եւ պ. Տէրտէրեանի այս յօդուածի արժէքն այն է, որ նա չքառականանալով Մուրացանին տաղանդաւոր, շնորհալի . . . անուանել, մանրամասն կերպով ցոյց է տալիս նրա տաղանդի առանձնայատկութիւնները, վերլուծում նրա երկերը, փնտրում այդ երկերի մէջ ցաք ու ցրիւ մտքերի, զաղափարների միացնող թելը, կառուցում է Մուրացանի գեղարուեստական աշխարհայեացքը և չօչափելի դարձնում այդպիսով Մուրացանի լուսաւոր ու խաւար կողմերը: Թէև մենք համաձայն լինել չենք կարող, որ «Մուրացանին գնահատելու համար այժմ ոչ մի հոգեբանական արդիւառիթ և դժւարութիւն չկայ», բայց և այնպէս կարծում ենք հեղինակի հետ, որ ժամանակ է սկսել Մուրացանին հասկանալու նրան գնահատելու գործը, և պ. Տէրտէրեանը այդ գործի մի նշանաւոր փորձն արել է: Այս թողցիկ նկատողութիւնները

ընտելը ինձ թոյլ չի տալիս աւելի երկար կանգ առնել այս յօդուածի մտքերի, քննադատութեան մեթոդի և ղեկավարող աշխարհահայեացքի վրայ. բայց և այնպէս պէտք է ասենք, որ սիսկի բան է Մուրացանի գլխաւոր գաղափարները անձնւիրութիւնն ու առաքելութիւնը հասկանալ և շատ աւելի ձեական է, Մուրացանի բոլոր հերոսներին երկու որոշ խմբի բաժանել—անձնութեան և ետասէրներ, Մուրացանի ֆորմուլան զոհարարութեան մասին—«որակ երկու կողմի շահերի մրցումն է լինում. այնտեղ զոհուել մասին խօսք լինել չի կարող»—որ պ. Տէրտէրեանի կողմից հռչակուած է որպէս ճիշտ ֆորմուլա և ըստ այդմ է բացատրում ու դրա վրայ կառուցում մի ամբողջ շէնք—մեզ թւում է հիմքից սխալ և անբաւարար. իբրև ապացոյց ասածներէս—Շէնք Վեդուէց Սարգիսը, որ էէգիստ. իւր օճախի պատիւը ամեն բանից բարձր համարող, իւր արշինը ձեռքն առած ամենին շարիող մի տիպ է, և պ. Տէրտէրեանի կողմից յայտարարուած է որպէս անձնազոհ և անձնութեան մէկը Այնուհետև մենք թերի և տեղ տեղ սխալ ենք համարում Մուրացանի վերաբոսադրած տիպը—հայ սեմինարիստի, և համաձայն չենք պ. Տէրտէրեանի թուած այդ 7—9 յատկութիւններին, որոնցով իբր թէ օժտուած են հայ սեմինարիստները—Ապա պէտք է ասենք, որ քոյր Աննան, այդ խորհրդաւոր միանձնուհին ոչ միայն իրական ճշմարտութիւնից զուրկ է տեղ տեղ, այլ շատ անգամ մեղանշում է նաև գեղարուեստական պահանջների դէմ և այդ ամբողջ վէպի ընթերցուածքն յաճախ գերբնականի, ոչ բնականի տպաւորութիւն է թողնում, և իրօք այդպէս էլ ի վերջոյ պէտք է ասենք, որ Մուրացանի ստեղծագործութեան մէջ ճիշտ է, որ տենդենցը տեղ տեղ նրան խանգարել է. բայց, լաւ միտ դրէք, նրա վարդապետող, առաքնալի դեր ստանձնող տենդենցը չի բացակայում նրա և ոչ մի գրուածքից, և նոյնիսկ վստահօրէն պէտք է ասենք, որ նրա լաւագոյն գրուածքների մէջ աւելի ակընքուխ է այդ տենդենցի ներկայութիւնը Մուրացանի տենդենցը միակողմանի է դարձրել ոչ միայն բացասական, այսպէս կոչուած «եսասէր» տիպերը, այլ աւելի շատ նաև դրական «անձնութեան» գաղափարատիպերը. մենք նոյն իսկ վստահանում ենք պնդել, որ Մուրացանի ստեղծագործութեան մէջ դրական տիպերն աւելի շինծու են երևում, աւելի թխուփ, անմարմին ու անիրական, քան նրա բացասական տիպերը, որոնք իրական են, ապրում են ու շնչում, թէև երբէք չեն վայելում մեր սիմպատիան: Դժբախտաբար մենք հնարաւորութիւն չունենք այս խնդրի մասին աւելի ընդարձակ գրել:

Պ. Ե. Ղարիբեանը «Հոգեհիւանդական տարրերը Շիրվանդադէի գրուածքներում» յօդուածով կլինիքական վերլուծութեան մի փորձ է կատարում: Այդ փորձը առաջինն է իւր տեսակի մէջ, և

րեան է բերում նոր տեսակէտ Շիրվանզադէի համար և արժանի է քաջալերութեան: Այս յօդուածի ընթերցումը մեզ իրօք որ համոզեց, որ «Շիրվանզադէն չնորհիւ իր ղիտոգական հարուստ ընդունակութեան տւել է մի շարք հոգեկան հիւանդների ճշգրիտ պատկերը, որ նա, իբրեւ մտածող կլինիլիստ, իր գրուածքներում հիւանդութեան միայն արտաքին արտայայտումները չի տւել, այլ աշխատել է պատճառաբանել նրանց ծագումը, ցոյց է տուել նրանց էթիոլոգիայի ճիշտ ըմբռնումը և այլն... Շիրվանզադէին շատերը հոգեբան անունն են տալիս. այդ ի հարկէ ճիշտ է. բայց նա ոչ պակաս նաև հոգեհիւանդաբան է: Եւ այդ միանգամայն հասկանալի է. առանց առողջ հոգու օրէնքները իմանալու չի կարելի տեղեակ լինել հիւանդ հոգու յատկութիւններին: Մեր հեղինակը տեղեակ է թէ առաջինին, թէ երկրորդին: Ինչպէս ասացինք պ. Ղարիբեանը մէջ տեղ է բերում նոր տեսակէտ և ցանկալի է, որ աւելի գործը հոգեհիւանդաբանական աւելի մանրակրկիտ ու աւելի հեղինակաւոր վերլուծման ենթարկուի: Եւ իրօք այն ժամանակ Շիրվանզադէի գրուածքներից շատերը բոլորովին այլ լոյսի մէջ կերևան, ինչպէս որ նրա «Արսէն Դիմաքսեանը», որ մինչ այժմեան քննադատների կարծիքով հեղինակի թոյլ գործերից էր համարւում, այժմ պ. Ե. Ղարիբեանին երևում է գրական գանձ «ոչ միայն մեր, այլ և միջանից անհամեմատ աւելի կուլտուրական ազդու թիւնների գրականութեան համար»:

Սրանով վերջացրինք մեր համառօտ քննախօսականը «Շողեր»-ի մասին: Եւ ուրախութեամբ պէտք է ասենք, որ նրա ընթերցանութիւնը մեզ համար հաճելի էր ու հետաքրքիր, նրա մէջ մտածելու և զգալու շատ բան գտանք. և միայն սրտանց ցանկանում ենք, որ «Շողերը» Պետերբուրգի հայ ուսանողութեան վերջին գրական ձևաւարկութիւնը չլինի. այդ ուղղութեամբ նոր եռանդ և աշխոյժ ենք ցանկանում հայ ուսանողներին:

Պետրոս Ալիսեան